3196

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«19» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 127 - 25

Նախաձեռնող՝ ***«ՕԼԴ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ***
Լոռու մարզ, Տաշիր համայնք, Նալբանդյան փ./կ/ 9

Գործունեությունը՝ ***Սարատովկայի բազալտի հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանում***
Լոռու մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 127 - 25

«19» Դեկտեմբեր **2025թ.**

Լոռու մարզի Սարատովկայի բազալտի հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՕԼԴ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագիծ
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Լոռու մարզ, Տաշիր համայնք, Սարատովկա բնակավայր

Ներածական մաս. Փորձաքննության ներկայացված հաշվետվությամբ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Լոռու մարզի Տաշիր համայնքի Սարատովկա բնակավայրից մոտ 2.2կմ դեպի հյուսիս գտնվող հողատարածքում: Հայցվող տարածքը Տաշիր բնակավայրի մոտակա բնակելի տնից գտնվում է 125մ, Մ-3 ասֆալտապատ ճանապարհից՝ 50մ, Սարատովկա բնակավայրի մոտակա շինությունից 1400մ հեռավորությունների վրա: Տարածքը ըստ իրադրության սխեմայի գտնվում է Տաշիր գետից 135մ հեռավորության վրա և առանձնացված է բուն հունային հատվածից բազալտի ժայռային մերկացումներով, այն գտնվում է 1496-1500մ բացարձակ բարձրությունների վրա և զբաղեցնում է մոտ 8,47հա մակերեսով տարածք:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի, 2-րդ կետի «թ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

գործունեության տեսակ: Հանքավայրի աշխարհագրական կոորդինատներ են՝

41° 05' 43" հյուսիսային լայնության

44° 18' 03" արևելյան երկայնության

ՀՀ Լոռու մարզի Սարատովկայի բազալտների հանքավայրի /հարավ-արևելյան տեղամասի/ պաշարները վերահաստատվել են ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդին առընթեր ՊՊՀ-ի 1973 թվականի ապրիլի 20-ի № 6883 արձանագրությամբ, հետևյալ կարգերով՝ B կարգի՝ 917 հազ.մ^3, ըստ C1 կարգի՝ 1963հազ.մ^3 : Բլոկների ելքի 20% հաշվարկով:

Հայցվող տարածքը ընդգրկված է Սարատովկայի բազալտների հանքավայրի C1 և 2-C1 բլոկների սահմաններում:

Հանքավայրի բազալտների ֆիզիկամեխանիկական հատկությունները բավարարում են որպես հումք շինարարական քարի РТУ Армянской ССР 100-62 «Պատքարեր լեռնային ապարներից» արտադրության համար:

Բազալտից ստացված խիճը կարելի է օգտագործել միայն մինչև 150-100 մարկայի բետոնի ստացման համար, որոնք չեն ենթարկվում ջրհագեցման և սառեցման:

Ըստ պինդ օգտակար հանածոների պաշարների դասակարգման Սարատովկայի բազալտների հանքավայրը դասվել է 2-րդ խմբին:

Նկարագրական մաս. Բացահանքի աշխատանքային նախագծի կազմման համար հիմք է հանդիսացել՝ հանքավայրում կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների հաշվետվությունը, ոչ հանքային շինանյութերի ձեռնարկությունների տեխնոլոգիական նախագծման նորմերը և այլ հրահանգչական ու նորմատիվային փաստաթղթերը:

Նախատեսվող գործունեության տարածքի հողերը հանդիսանում են համայնքային սեփականություն, նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, իսկ գործառնական նշանակությունը՝ արոտավայրի է:

Հայցվող ընդերքի տեղամասի կոորդինատները ARM WGS – 84 (ARMREF 02) համակարգով հետևյալն են՝

1.Y=8441224.6400 X=4551329.6500

2.Y=8441266.4877 X=4551483.3244

3.Y=8441345.1516 X=4551557.2536

ՀՀ ՇՐՋԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻՆ ԿՐՈՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЭКОЛОГИЧЕСКИЙ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

4.Y=8441431.2330 X=4551418.5705

5.Y=8441569.5259 X=4551471.9986

6.Y=8441662.0600 X=4551337.2537

7.Y=8441330.0000 X=4551187.0000

Արդյունահանման նախագծով նախատեսվում է կատարել հետևյալ աշխատանքները՝

1. Հանքարդյունահանման աշխատանքները մեխանիկական եղանակով՝ էքսկավատորի հենքի վրա տեղադրված հիդրավլիկ մուրճի միջոցով:

2. Հանքարդյունահանման աշխատանքները կատարել շուրջտարյա աշխատանքային ռեժիմով՝ 260 օր:

3. Իրականացնել խախտված հողերի ռեկուլտիվացիա:

Բացահանքի օտարման տարածքը կազմելու է 8,47հա, ծառայման ժամկետը նախատեսվում է 15.6 տարի:

Մարվող պաշարների քանակը կազմելու է՝ 603910մ^3, կորզվող պաշարները կազմելու են՝ 57130մ^3, տարեկան արդյունահանվող պաշարները կկազմեն՝ 37000մ^3:

Մակաբացման աշխատանքները նախատեսված է կատարել բազմաֆունկցիոնալ սարքավորմամբ հագեցած տեխնիկայով:

Օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքները բաղկացած են լինելու հետևյալ գործողություններից՝

- օգտակար հանածոյի անջատում հանքազանգվածից,
- օգտակար հանածոյի հեռացումը հանքախորշից,
- օգտակար հանածոյի բարձումը տրանսպորտային միջոցների մեջ,
- ջարդքարի /խճի հումքի/ հեռացում հանքի տարածքից:

Լցակույտ առաջացնող ապարները բացահանքի սահմաններում հանդիսանալու են մակաբացման ապարները և հիմնատակող ապարները:

Բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ արդյունահանման նախագծի կազմելու է 37000մ^3:

Պարճառաբանական մաս. Հաշվետվության փորձաքննության շրջանակներում կատարվել է գործունեությանն առնչվող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների ուսումնասիրություն: Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝

• հիմնական մակերևութային ջրային միավորի՝ Տաշիր գետի բնապահպանական աղտոտման հետ,

• լեռնակապիտալ աշխատանքների, մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ,

• օդային ավազան անօրգանական փոշու արտանետումների հետ,

• արտակարգ իրավիճակների առաջացման հետ,

Հանրային երկրորդ լսումների ծանուցումն իրականացվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Տաշիր համայնքի վարչական ղեկավարի նստավայրում իրականացվել է հանրային լսումը: Հանրային լսումների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առաջարկությունները և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, ներքին գործերի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Լոռու մարզպետարանը, Տաշիր համայնքը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Ստացված դիտողությունները և առաջարկությունները ներկայացվել են նախաձեռնողին լրամշակում կատարելու նպատակով:

Լրամշակման ներկայացված գրությամբ նախաձեռնողին առաջարկվել է՝ վերանայել սանիտարապաշտպանիչ գոտու չափերը՝ նախագծով սահմանված 100 մ-ի փոխարեն՝ ընդունելի համարել՝ 300 մետրը, հիմք ընդունելով՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանի հավելվածը՝ «Շինարարական արդյունաբերության բնագավառի՝ Հանքաքարերի և ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման՝ ժէ. ենթակետի՝

« ոչ պայթեցման եղանակով քարի արդյունահանման արդյունաբերական օբյեկտների համար»:

Նախաձեռնողի նկատառումները, որ նշված կետը չի վերաբերում կատարավող արդյունահանման աշխատանքներին, այլ սահմանվում է 100 մ սույն որոշման՝ «Հանքաքարերի և ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման» 4-րդ մասի «IV» ենթակետի պահանջի՝ չի ընդունվել փորձաքննական գործընթացի շրջանակներում, քանի որ համաձայն՝ Տարածքային կառավարման և

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

ենթակառուցվածքների նախարարի 11 օգոստոսի 2021 թ.-ի «Օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգները սահմանելու մասին» N 06-Ն ՀՐԱՄԱՆԻ՝ ըստ պինդ օգտակար հանածոների պաշարների դասակարգման՝ Սարատովկայի բազալտների հանքավայրը դասվում է 2-րդ խմբին, որպես շինարարական և երեսապատման քարերի հանքավայրերի:

Եզրափակիչ մաս. Հանքավայրի արդյունահանման համար դիտարկված սանիտարական գոտու 300մ-ի խախտումը կարող է ազդել ոչ միայն գետի, այլև մոտակա 130 մ հեռավորությամբ գտնվող բնակելի տարածքի վրա:

Բազալտի հանքը շահագործվելու է Տաշիր գետին շատ մոտ՝ փորձաքննական գործընթացում համապատասխան կոորդինատների նշագրմամբ հստակեցվել է 124 մ հեռավորությունը և 5մ ռելիեֆային բարձրության տարբերությունը: Հանքարդյունահանման ընթացքում առաջացող փոշին և թափոնները կարող են քամու և անձրևաջրերի միջոցով ներթափանցել գետ, բարձրացնել պղտորությունը և վնասել ջրային էկոհամակարգը:

Եթե գետի ջրերը սկսեն ներծծվել դեպի հանքավայրի փոսորակները, քանի որ բազալտն ունի մեծ ծակոտկենություն՝ դա կարող է նվազեցնել գետի բնական հոսքը, ինչը վտանգավոր է լինելու հատկապես ամռանը՝ երաշտի ժամանակ:

Ելնելով վերոգրյալ հիմնավորումներից և հաշվի առնելով Հողային օրենսգրքի 107-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը՝ բնակավայրերի սահմանագծերում ընդգրկված հողերում ընդերքի ու բնական պաշարների օգտագործումը սահմանափակվում կամ արգելվում է, եթե նման գործողությունները կարող են վտանգ ստեղծել մարդկանց կյանքի ու առողջության համար և վնաս պատճառել շրջակա բնական միջավայրին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՕԼԴ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի Սարատովկայի բազալտի հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝ Շուշանիկ Կարապետյան